



## 167. ՄԱՐԹԸ ՆԱԽ ԿԽԵԳՅԸ

Ըլալ ա մալ մին մարթ, մին կնեգյու էս մարթը քյնոնմ ա հանդին հոնձ անըմ, խոտ հարզմ, վար անըմ, իսկ կնեգյու տոնը պահըմ ա, խմոր ա անըմ, հավեն ճոտեն եշըմ ա և շատ հալալ-զուլալ ապրում ըն:

Մին օր մարթը հանդան նղացած կյամ ա տոն, կնեգյու մարթին վենները լվանըմ ա, հաց տամ, լայ տամ, տեղը քցնոնմ և ասըմ.—Ա՛ մարթ, եր կաց քոն իլ, նղացած ըստ Մարթը կնդանը ասըմ ա.—Ա՛ կնեգյու, էս աստված բոր կոնե՞ն, վեր տու տանը դինչ նստիս, իսկ ես քյնիմ հանդին լրջարվիմ, կնեգյու ծծաղըմ ա և ասըմ.—Ա՛ մարթ, վեր իտի յա, տու կաց, տոնը պահն, իսկ ես քյնիմ հանդըմը ըշխաղիմ: Մարթը ռազի յա կենըմ:

Ըստավուր կնեգյու եր ա կենըմ մարթում հրցնում: Ա՛ մարթ, ես քյնոնմ ըմ հանդը, ասե տեսնամ հի՞նչ բիդի անիմ: Մարթը բադասխանըմ ա.—Նորման քաննը հենգյու խորթն ա, քյնի հնձի, էշը կես օրեն ճոնկ տոք, իսկ գործա կյալիս պատառ խոտ պեր, վեր ռերոնդրանը էշը օտեն:

Էտ պայմանան ետը մարթն ա կնդանան հրցնում, թա բաի՞նքյու հի՞նչ բիդի անե: Կնեգյու մարթին ասըմ ա.—Էն ա միկա մածուն կա, խնեցեն ածե հարե, ճոտերեն եշի, վեր լղանը շտանե, համ էլ մին թուրում հաց կթիսիս: Մարթը համաձայնվում ա: Կնե-

գլը քյնծմ ա հանդը, իսկ մարթը մեամ ա տանը: Էս մարթը հմա-  
լա կնեզյը քյնալանը ետը մին երկու ստաքան արաղ ա խմում,  
խմորը խաշ անրմ, հավեն ճռտերը թիլավ կպոտում և լոխ մին-  
տեղ կապում հավեն վտներան, նրա համար, վեր քշտան դրաղ մի  
կինան: Ետավ կյամ ա խմորը թա հունցն, մին էլ մտածըմ ա,  
ասըմ ա, կարող ըմ երկու գործը մին տեղ անել և նելի պրծնիմ,  
դինչ նստիմ:

Էս մարթը խնեցեն մաշկն ա կապում, շրջում ըսկում խմորը  
հունցել, հանցու համ խնեցեն մաշկն հարվե, համել խմորը  
հունցվե:

Էս թունդ գործեն վախտը հրեանը հարայ ա տամ, թա արա  
հեյ, Առաքել, ճռտերը վղանը տարավ: Սան դժմա վղանը վեր մին  
ճռտա փոնալ ա, սաղ ճռտերը թուխսկանը նհետը տարալ ա: Էս  
մարթը թայդի տուն ա կյամ, վեր վղանան ճռտերը խլի, մաշ-  
կեն կապած խնեցին տռանը պատեն նի յա կյամ կոտըրվում,  
շալվարը թանավ լսնում: Էս Առաքելը ճռտերեն հաշիրավը շաղ-  
վում ա, իսկ էս շաղված վախտը խռոկ կալած խողը նի յա մըն-  
նում տռոնը, ըսկում տաշտին խմորը թամռն օտիլ: Էս մարթը  
տիուր, դիլխոր տռանը նստում ա մինչև մթենը:

Մթնում ա թա չէ, կնեզյը կյամ ա և ասըմ.—Ա՛ մարթ, նոր-  
ման քսանը հենոյ խորթն ա, ես երեսունն ըմ հնձալ, էշը ճուկ ըմ  
տվալ, լավ կանալ խոտ ըմ պերան, ճափիկում ըխպրան կոլան  
լցալ ըմ պերան, կա մին լավ խմե, —ասըմ ա, կոլան տալիս ա  
մարթին: Ըտրանից ետը կնեզյը հրցնում ա.

—Ա՛ մարթ, խմորը հինչ հա՞լի յա:

Մարթը ասըմ ա.—Խմորը խոզան հրցրու.

—Իսկ խնեցի՞ն:

Մարթը ասըմ ա.—Խնեցեն պատան հրցրու.

Իսկ ճռտերեն պե՞նը շալղանան:

—Համ էլ ա՝ կնեզյ, կաց տռոտ պահե, իսկ ես քյնիմ իմ  
գործիս:

